

## Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝  
Հանձնաժողով) աշխատակազմի քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնն  
զբաղեցնելու համար

### **1. Հանձնաժողովի աշխատակազմի դիմումների քննարկման բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 89-3.3-16):**

Մասնակցում է կարգավորվող ընկերությունների կողմից սպառողների դիմումների վերաբերյալ  
ներկայացված տեղեկատվության ստուգման, ընկերություններում ուսումնասիրության իրականացման և  
վերլուծության, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության առցանց համակարգի ձևավորած՝ գրավոր  
դիմումի հսկիչ համարը դիմումատուին հայտնելու, Հանձնաժողովի պաշտոնական կայքի «Հետևել դիմումի  
ընթացքին» բաժինը համապատասխան տեղեկատվությամբ ներբեռնելու, դիմումների պատասխանի  
նախագծի նախապատրաստման աշխատանքներին, իրականացնում է Բաժնի  
փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները և պաշտոնի անձնագրով սահմանված այլ  
աշխատանքներ.

#### **\*Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝**

բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության  
պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական, կամ  
հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների  
տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների  
պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ  
առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-  
ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ,  
ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

#### **\*Թափուր պաշտոնի հիմքի վերացման ժամկետը՝**

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձի կողմից նշանակում կատարվելը.

#### **\* Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է՝**

« 08 » « օգոստոսի » 2018թ

#### **\*Աշխատավարձի չափը՝**

Հարյուր քսանինը հազար վեց հարյուր երեսունչորս (129 634 ) դրամի չափով.

#### **\*Աշխատանքի վայրը, հեռախոսահամարները՝**

ք.Երևան, Սարյան 22, հեռ. 52-53-40-108,118

**\*Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝** դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն  
դիմում,

տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակություն-  
ների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող  
փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության  
դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝  
բնօրինակների հետ միասին,

արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր և գորակոչային  
տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ իսկականի հետ միասին,

մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,

անձնագրի, հանրային ծառայության համարանիշի (սոցիալական քարտի) պատճենները:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 10<sup>00</sup>-ից մինչև 12<sup>30</sup>-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերը ներկայացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի  
աշխատակազմ (Երևան, Սարյան22, հեռ. 52-53-40-108,118):